Պատմություն և մշակույթ 2025 № 22 (2)
History and Culture

https://doi.org/10.46991/hc.2025.22.2.099

The Distribution and Cultural Life of Armenians in the Telavi Region of Kakheti in the 1920s

Babken Ghazaryan
https://orcid.org/0009-0002-1313-5599
YSU Faculty of History, Chair of History of Countries Surrounding Armenia, Applicant
babken.ghazaryan@ysu.am

Keywords: Georgia, Kakheti, Armenians, population, immigration, Soviet power, Tsarist Russia, social status.

The purpose of this article is to present the distribution of Armenians in the Kakheti region of Georgia and its administrative districts of Telavi and the regional center of the same name. In the article, we touch upon the socio-political and economic situation of Armenians, we have touched upon the native language, Armenian historical and cultural monuments, and the activities of educational institutions. Analyzing the policy pursued by the Georgian authorities, especially during the Soviet period, we aimed to reveal what was the reason for the increase or decrease in the number of Armenians in the given region. During the research, we have made a historical overview, presenting the reasons for the immigration of Armenians to Kakheti. In the work, we present the number of Armenians in the settlements of the Telavi region or the so-called Telavskiy uezd in Soviet times, their historical and cultural monuments, and the status of schools. It is noteworthy that, unlike today's administrative-territorial division of Georgia, in Soviet Georgia, Kakheti had two provinces (uezds): Telavi and Sghnakhi. We must state that in the early years of Soviet rule, administrative-territorial divisions in the Kakheti region were implemented on an arbitrary basis, and some of the settlements we present in the article are located in the Sighnakhi (სღნაღი), Kvareli (ყვარელი) and Gurjaani (გურჯაანი) regions.

Հայերի տեղաբաշխվածությունն ու մշակութային կյանքը Կախեթի երկրամասի Թելավի շրջանում 1920-ական թվականներին

Բաբկեն Ղազարյան
ԵՊՀ պատմության ֆակուլտետ, Հայաստանի հարակից երկրների պատմության ամբիոն, հայցորդ

Հիմնաբառեր՝ Վրաստան, Կախեթ, հայություն, բնակչություն,

History and Culture Vol.-22(2), 2025, pp. 99-107.

Received: 15.09.2025
Revised: 13.10.2025
Accepted: 22.11.2025

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

© The Author(s) 2025

The Distribution and Cultural Life of Armenians in the Telavi Region of Kakheti in the 1920s

Հայերի տեղաբաշխվածությունն ու մշակութային կյանքը Կախեթի երկրամասի Թելավի շրջանում 1920-ական թվականներին

ներգաղթ, խորհրդային իշխանություն,
ցարական Ռուսաստան, սոցիալական կարգավիճակ։

Սույն հոդվածի նպատակն է ներկայացնել հայերի տեղաբաշխվածությունը Վրաստանի Կախեթի երկրամասում և վերջինիս վարչական շրջաններից Թելավում ու համանուն շրջկենտրոնում։ Հոդվածում անդրադարձ ենք կատարել հայերի սոցիալ-քաղաքական ու տնտեսական կացությանը, մայրենի լեզվին, հայկական պատմամշակութային կոթողների, կրթական հաստատությունների գործունեությանը։ Վերլուծելով վրաց իշխանությունների վարած քաղաքականությունը հատկապես խորհրդային ժամանակահատվածում՝ նպատակադրվել ենք վեր հանելու, թե ինչով էր պայմանավորված հայերի թվաքանակի աճը կամ նվազում տվյալ տարածաշրջանում։ Հետազոտության ընթացքում կատարել ենք պատմական ակնարկ՝ ներկայացնելով հայերի ներգաղթի պատճառները դեպի Կախեթ։ Աշխատանքում ներկայացրել ենք Թելավի շրջանի կամ խորհրդային տարիներին անվանակոչված Телавский уезд-ի բնակավայրերում հայերի թվաքանակը, նրանց պատմամշակութային կոթողներն ու դպրոցների կարգավիճակը։ Հատկանշական է, որ ի տարբերություն ներկայիս Վրաստանի վարչատարածքային բաժանման՝ խորհրդային Վրաստանում Կախեթը ունեցել է երկու գավառ (уезд)՝ Թելավի ու Սղնախի։ Պետք է փաստենք, որ խորհրդային իշխանության սկզբնական տարիներին Կախեթի երկրամասում վարչատարածքային բաժանումները իրականացվել են կամայական սկզբունքով, և ուսումնասիրության ենթակա բնակավայրերի մասը գտնվում է Սղնախի (სღნაღო), Ղվարելի (ყვარელი) ու Գուրջաանի (გურჯაანი) շրջաններում։

Расселение и культурная жизнь армян в Телавском регионе Кахети в 1920-е годы.

Бабкен Казарян
Факультет Истории, ЕГУ, кафедра истории стран сопредельных с Арменией, соискатель

Ключевые слова: Грузия, Кахетия, армяне, население,
иммиграция, Советская власть,
царская Россия, социальный статус.

Факультет Истории, ЕГУ, кафедра истории стран сопредельных с Арменией, соискатель Целью данной статьи является представление распределения армян в регионе Кахети в Грузии и его административных районах Телави и одноименном региональном центре. В статье рассматривается социально-политическое и экономическое положение армян, затрагиваются вопросы родного языка, армянских историко-культурных памятников и деятельности образовательных учреждений. Анализируя политику грузинских властей, особенно в советский период, мы стремились выявить причины увеличения или уменьшения численности армян в данном регионе. В ходе исследования

был сделан исторический обзор, в котором представлены причины иммиграции армян в Кахетию. В работе представлена численность армян в населенных пунктах Телавского региона или так называемого Телавского уезда в советское время, их историко-культурные памятники и состояние школ. Примечательно, что в отличие от сегодняшнего административно-территориального деления Грузии, в советской Грузии Кахетия имела две провинции (уезда): Телави и Сгнахи. Надо констатировать, что в первые годы советской власти административно-территориальное деление в Кахетии осуществлялось на произвольной основе, а некоторые из представленных в статье населенных пунктов расположены в Сигнахи (სიღნაღი), Кварели (ყვარელი) и Гурджаани. (გურჯაანი).

* * *

Ներածություն: Արևելյան Վրաստանի նշանավոր երկրամասերից է Կախեթը ~~(კახეთი)~~: Պատմության տարբեր շրջափուլերում այն դիմագրավել է օտար նվաճողների ասպատակություններին, բայց կարողացել է պահպանել իր պատմամշակութային ու հոգևոր յուրատեսակ դիմագիծը ներկայիս Վրաստանի կյանքում: Կախեթը զբաղեցնում է Իոր ու Ալազան գետերի ավազանը: Այն սահմանակից է Վրաստանի Քարթլիի երկրամասին, Մեծ Կովկասի լեռնաշղթային, Կուր գետի հովտային շրջաններին: Պատմականորեն Կախեթ երկրամասում ընդգրկվել են նաև Հերեթը ու Կամբեճան շրջանները՝ այդ տարածքներով հանդերձ կազմելով մոտավորապես 17.000 ք/կմ տարածք [ქარტლის ცხოვრების ტოპონარქეოლოგიური ლექსიკონი, 242-243]:

Բագրատ IV-ը (1027-1072) սկսել էր երկրի միավորման գործընթացը, որը միաժամանակ համընկավ Անիի Բագրատունյաց թագավորության անկմանը: Ուստիև նկատվում էր հայերի հոծ ներհոսք Վրաստան:

Կախեթում կատարված իրադարձություններից նշանակալի էին 1038-1039 թթ. տեղի ունեցած մի շարք իրողություններ: Տեղի իշխան Կյուրիկե Գ-ի մահից հետո գահին բազմեց վերջինիս քրոջ որդին՝ Գագիկը (1039-1058 թթ.), որը հայ Բագրատունյաց տոհմի ներկայացուցիչ Դավիթ Անհողինի որդին էր [Մելիքսեթ-Բեկ Լ. Մ., 2013, 203-205]: Կախեթում հայ Բագրատունիների թագավորությունը գոյատևեց մինչև 1103-1104 թվականները, երբ Դավիթ IV Շինարար թագավորը (დავით მე-4 აღმაშენებელი) միացրեց Կախեթն իր տիրույթներին [Ջուանշէրի, 1884, 112]: Կախեթում հայ գահակալների առկայության պայմաններում կարող ենք եզրակացնել, որ հայ բնակչության թվաքանակը ավելացել է՝ պայմանավորված սելջուկյան արշավանքներով, Բագրատունյաց Հայաստանի անկմամբ: Վրաստանում հայերի հաստատվելը հովանավորել են նաև վրաց թագավորները: Նախ հայերը մարտնչող ուժ էին և շատ արագ համալրում էին վրացական բանակը, երկրորդ՝ վրաց արքաները գնահատում էին հայ շինականի ու արհեստավորի գործունեությունը: Ակնհայտ է, որ վրաց արքաները այդ քայլով նպատակ ունեին շենացնելու իրենց երկիրը: Հայերի գաղթը Վրաստան նաև ենթադրում էր ստվարացնել այն երկրամասերի բնակչությունը, որտեղ կար քոչվոր ցեղերի հաստատվելու վտանգ: Կախեթը, լինելով երկրագործական բարեբեր երկրամաս, ողջ միջնադարի ընթացքում բախվել է այդ մարտահրավերին:

XVIII դարում և հատկապես երկրորդ կեսին հայերի նոր խմբեր են հաստատվեցին Կախեթում: Ըստ 1745 թ. տվյալների՝ «հայերը 1745 թ. սարսափելի աղքատության մեջ

հաստատվեցին Թելավի և Սղնախի մեջ…» [«Մշակ», 01.03.1888, №25]: Վերջիններս Արցախի ու Շաքի-Շիրվան գավառի բնիկ բնակիչներն էին: Զգալի թիվ էին կազմում հատկապես Հյուսիսային Արցախի գյուղերը լքած հայերը: Առկա նյութերը փաստում են, որ շուրջ 300 վրացաբնակ գյուղերից համարյա յուրաքանչյուր երրորդում բնակվում էին նաև հայեր [Կարապետյան, 2004,10]: XIX դարի վերջին Կախեթը ուներ 155.000 բնակիչ, որից 65.000-ը՝ Թելավի գավառում, 90.000-ը՝ Սղնախի գավառում: Հայերի թվաքանակը աստիճանաբար աճել է մինչև 1870-ական թվականներին, իսկ 1910-ական թվականներից կտրուկ նվազել է: Սա պայմանավորում ենք ցարական Ռուսաստանի վարած ազգային ոչ արդարացի քաղաքականությամբ, վրաց հասարակության ու վրացական կուսակցությունների ազգային, քաղաքական գործունեության հետևանքով:

Վրաստանի առաջին հանրապետության տարիներին հայերի թվաքանակը սկսեց նվազել ողջ երկրում, իսկ խորհրդային տարիներին՝ մինչև 1930-ական թթ. կեսը, խորհրդային վրացական իշխանությունները վարում էին հավասարակշիռ, սոցիալիստական գաղափարախոսությանը արժանավայել քաղաքականություն, որը հանգեցրեց հայ բնակչության թվաքանակի աճին:

1921-1925 թվականները Վրաստանի պատմության շատ կարևոր շրջան են: Համաշխարհային քաղաքական ասպարեզում տեղի ունեցող իրադարձությունները արտացոլվել են նաև վրաց ժողովրդի պատմական զարգացման մեջ: Առաջին համաշխարհային պատերազմն ավարտվել էր Հարավային Կովկասի համար բացասական հետևանքներով, Ռուսաստանում հաղթել էր բոլշևիկյան հեղաշրջումը, ստեղծվել էր երկու հակադիր գաղափարախոսական ճամբար՝ ժողովրդավարական ու տոտալիտար, եվրոպական երկրներում մեկնարկել էին նոր քաղաքական համակարգերի որոնումները, ինչն արտացոլվել է նաև ագրեսիվ ֆաշիզմի ու բռնապետական կոմունիզմի քաղաքական նկրտումներում [წენგუაშვილი, 3]:

Ըստ վրաց հեղինակի՝ 1921 թ. փետրվարին Վրաստանում բռնի հաստատվեց խորհրդային իշխանություն: Սկսվեց քաղաքական նոր կառույցների ձևավորումը, տեղի ունեցան աննախադեպ բռնաճնշումներ ազգային ուժերի նկատմամբ, բայց միևնույն ժամանակ կար հավատ նոր սոցիալիստական համակարգի, տնտեսական ու մշակութային շինարարության նկատմամբ [წენგუაშვილი, 3]:

Մեր ուսումնասիրության թեման արդիական է, քանի որ հայերի տեղաբաշխվածությունը Վրաստանում 1920-ական թթ. գրեթե լուսաբանված չէ հայկական իրականության մեջ: Կարևոր է դիտարկել և վերլուծել, թե ինչ ժողովրդագրական պատկեր էր Վրաստանում խորհրդային իշխանության հաստատումից հետո:

Հայերի տեղաբաշխվածությունը Թելավի շրջանում ու Թելավ քաղաքում 1920-ական թվականներին: Թելավի երկրամասը գտնվում է Կախեթի երկրամասում՝ Ալազան գետի աջ ու ձախ կողմերում: Նախկինում ընդգրկել է Թելավի գավառի հիմնական մասը [ქარტლის ცხოვრების ტოპოარქეოლოგიური ლექსიკონი, 242-243,]: Հետխորհրդային տարիներին ընդգրկվելով Վրաստանի Հանրապետության Կախեթի շրջանում՝ այն ներկայումս սահմանակից է Կախեթի Ախմետայի (ახმეტა), Սագարեջոյի (საგარეჯო), Գուրջանիի (გურჯაანი)

ու Ղվարելի(ցարելո) շրջաններին, իսկ արտաքին սահմանով՝ Ռուսաստանի Դաշնության կազմում գտնվող Դաղստանի Ինքնավար Հանրապետությանը [Կարապետյան, 58]:

Երբ դիտարկում ենք ժողովրդագրական պատկերը XIX դարի վերջերին ու XX դարի սկզբներին, առաջինը, ինչն աչքի է զարնում, վրացաբնակ գյուղերում ու քաղաքներում ժողովրդագրական պատկերի փոփոխությունն է և վրաց էթնիկական խմբի ստվարացումը: Երկրորդը, ինչ ուսումնասիրման համար կարևոր է, վարչատարածքային բաժանումն է: Ցարական կառավարման տարիներին Թելավի գավառում ընդգրկվել են գյուղեր, որոնք խորհրդային կարգերի հաստատումից հետո հայտնվել են հարակից Սիղնախի գավառում: Երբ ուսումնասիրում ենք XX դարի 10-ական թվականները, ժամանակի աղբյուրներն ու տարեգրքերը, ապա ականատես ենք դառնում մի յուրատեսակ իրողության, այն է՝ ցարական կառավարության անցկացրած վիճակագրական տվյալների ազգային ու ժողովրդագրական քաղաքականության ուղեգիծը: Մասնավորապես, երբ վերլուծում ենք Կովկասյան տարեգիրքը, այնտեղ բոլոր բնակավայրերը նշված են ըստ տեղավայրի էթնոսի քանակական առավելության: Նշված է, առանձին վրացական, խևսուրական, օսական, հայկական, թալիշական, թաթարական և այլն: Դա պայմանավորում ենք ցարական իշխանության վարած ժողովրդագրական ուծացման քաղաքականությամբ, երբ վարչական բաժանումները իրականացվում էին ոչ թե ազգային հետաքրքրություններով, այլ ավելի կառավարելի դարձնելու համար երկրամասը տնտեսական անհիմն գործոններով:

Սույնով ներկայացնում ենք Թելավի շրջանի խոշոր բնակավայրերն ու Թելավ քաղաքի բնակչությունը՝ ըստ 1926 թ. Համամիութենական մարդահամարի:

Ախատել: Այս գյուղը գտնվում է Թելավ քաղաքից 5-6 կմ հյուսիս-արևմուտք: Այստեղ հայ գաղթականները հաստատվել են XIX դարում: Նրանց մասին հիշատակումներ կան դեռևս 1802 թվականից [Կարապետյան, 58]: Հետագայում այս գյուղը վերածվել է վրացախառն թրքաբնակ գյուղի: 1870 թ. հիշատակվում է 4 ազգությամբ հայ [ՀԱԱ, ֆ.53, ց.1, գ. 3857, թ.62-63]: Ըստ 1914 թ. տվյալների՝ գյուղն արդեն ունեցել է 242 շունչ [Кавказский календарь на 1915 г., стр.92]: Գյուղում հիշատակվում է Սուրբ Աստվածածին անվամբ փայտաշեն եկեղեցին[1]:

Արթանա: Այս բնակավայրը գտնվում է Թելավ քաղաքից 18 կմ հյուսիս: Գյուղը վրացաբնակ է եղել, իսկ հայերի մասին տեղեկություններ կան 1802 թվականից [АКАК т.1, стр. 472.]: Ցավոք, հայերը շուտ մոռացության են տվել մայրենի լեզուն, որի պատճառներից մեկը նաև եկեղեցու բացակայությունն էր: Հիշատակվում է, որ հայերն ունեցել են իրենց գերեզմանատունը [Կարապետյան, 60]: Նշանավոր հայերից հիշատակվում է Կարալյանցների տոհմը, որը տիրապետում էր մետաղի հանքավայրերի: 1910 թ. գյուղում հայերի թիվը կազմում էր 30, որից 19-ը՝ արական, իսկ 11-ը՝ իգական [ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3917, թ. 5]:

Թելավ քաղաք: Թելավ քաղաքը Արևելյան Վրաստանի խոշոր քաղաքներից և գտնվում է Կախեթի կենտրոնական մասում: Հայտնի են «Թելավ» անվան ստուգաբանության մի քանի տարբերակներ: Ըստ դրանցից մեկի՝ «Թելավ» վրացերեն նշանակում է «մաքուր օդ»՝ «թէլի-

[1] Եկեղեցու կառուցման թվականը ստույգ հայտնի չէ, բայց 1818 թ. արդեն իսկ հիշատակվում: 1852 թ. եկեղեցին արդեն չի գործել, իսկ գործուն ժամանակներից հիշատակվում էր տեր Պետրոս քահանա Հարությունյանի ծառայությամբ: Մանրամասն տե՛ս **Կարապետյան Ս.**, Հայերը Կախեթում, գիրք Ը, Երևան, 2004:

ավա» (თელი-ავა), որը հետագայում աղավաղվել է և դարձել *Թելավ*: Ըստ Վրաստանի հայերի՝ «Թելավ» բառը ծագել է «թե լավ է» բառից [Կարապետյան, 61]: Քաղաքի հիմնադրումը, ըստ որոշ աղբյուրների, կապվում է Կյուրիկե Մեծ արքայի անվան հետ, որն էլ այն դարձրեց մայրաքաղաք [ქართლის ცხოვრების ტოპოარქეოლოგიური ლექსიკონი, 242-243]:

Հայերը Թելավում բնակություն են հաստատել առնվազն միջնադարից: Մի հաղորդման համաձայն՝ Հերակլ 2-րդ արքայի հրամանով Թելավ է տեղափոխվել մինչև 60 ընտանիք Ղարաբաղից ու Ելիզավետպոլից: 1900-ական թթ. սկզբներին նշվում են այնպիսի նշանավոր հայ ընտանիքներ, ինչպիսիք էին Խեչինովները, Կիրակոսովները, Օհանեսովները, Մամացովները և ուրիշներ: 1916 թ. տվյալների համաձայն՝ Թելավ քաղաքի բնակչությունը կազմել է 10.026 մարդ, որից հայերը՝ 7062 [Кавказский календарь на 1917 г., стр. 190-193]: Նշենք, որ XIX դարի ընթացքում նկատում ենք, որ հայերի թվաքանակը տատանվում է: 1886 թ. հիշատակվում է շուրջ 9182 մարդ, իսկ 1920-ական թթ. հայերի թիվը կտրուկ պակասել է: Ըստ 1926 թ. Համամիութենական մարդահամարի՝ Թելավ քաղաքում կար 3606 մարդ, որից 1706-ը՝ արական, իսկ 1900-ը՝ իգական [Всесоюзная перепись населения 17 декабря 1926 год, т. 14 СР Грузии, стр. 92]: Հայերեն են խոսել ընդհանուր 502 մարդ, որից 232-ը՝ արական, իսկ 270-ը՝ իգական սեռի ներկայացուցիչ [Всесоюзная перепись населения 17 декабря 1926 год, том 14 СР Грузии, стр. 92]: Բնակչության կտրուկ ավելացումը կամ պակասումը պայմանավորված է եղել արտագաղթով, վարակիչ մահաբեր հիվանդություններով, դավանափոխությամբ և այլն:

Հայապահպանության գործում կարևոր էր կրթության ու եկեղեցու դերը: Հայերի դերը կրթական կյանքում նշանավոր է եղել հատկապես XIX դարի վերջերից: Թելավում գործել են մի շարք կրթօջախներ, որոնց շնորհիվ հայերը պահպանել են իրենց մայրենի լեզուն: Չնայած գործող դպրոցներին՝ ցարական կառավարության վարած քաղաքականության հետևանքով դրանք հիմնականում փակվել են: Դեռևս 1831 թ. գործել է դպրոց՝ 3 ուսուցչով, 40 հայ ու 20 վրացի աշակերտով [Կարապետյան, 70]: 1863 թ. բացվել է «Գայանյան» օրիորդաց դպրոցը, որին կից գործել է գրադարանը 1878 թվականից [«Մշակ», 1878 № 79]: Նշանավոր էր Վարդանյան-Գայանյան երկսեռ դպրոցը, որի հոգաբարձուներն էին Ա. Տեր-Բարսեղյանը, Մ. Վերմիշյանը, Գ. Տեր-Հարությունյանը, և Ս. Տեր-Սարգսյանը [Կարապետյան, 71]:

Առաջին աշխարհամարտի տարիներին թելավցի հայերը 1916 թ. բացեցին նաև հայկական գիմնազիայի դռները [Կարապետյան, 72]:

Վրաստանի խորհրդայնացումից հետո նախկին գավառի հայկական բոլոր դպրոցները փակվել են: Բացառություն է կազմել քաղաքի 9-ամյա դպրոցը: 1920-ական թթ. քաղաքի հայկական դպրոցում եղել է հատկապես մայրենիի, հայ գրականության, բնագիտության ու այլ առարկաների ուսուցիչների պակաս: Հիշատակվում է, որ 1925 թ. եղել ուսուցչական 16 անդամից բաղկացած խումբ: Դպրոցն ունեցել է շուրջ 500 աշակերտ, իսկ ուսուցիչներից նշանավոր էր Պ. Աթանեսյանը, որը ջանքեր էր գործադրում դպրոցը ծանր վիճակից հանելու համար: Քաղաքում գործել է նաև գրադարան-ընթերցարան 1924 թվականից: Եղել է թվով երկու գրադարան-ընթերցարան, որոնք կրել են Ս. Շահումյանի ու Ա. Ջափարիձեի անունները: Նշվում է, որ բացակայել են հայերեն պարբերականները [Կարապետյան, 73]:

Թելավ քաղաքում գործել են նաև մի շարք հայկական եկեղեցիներ։ Նրանցից նշանավորն էր Ավագ Սուրբ Գևորգ եկեղեցին, որը հայտնի էր շքեղությամբ ու ճարտարապետական լուծումներով։ Հայտնի է, որ 1829 թ. եկեղեցուն կից կառուցվել է զանգակատուն [ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 157]։ Եկեղեցին փակվել է 1923 թ. մարտի 31-ին, իսկ 1924 թ. ապրիլի 19-ին խորհրդային իշխանությունները քանդել են զանգակատունը [Կարապետյան, 74]։

Թելավի նշանավոր եկեղեցիներից էր նաև Սուրբ երրորդություն եկեղեցին, որի հոգաբարձուն Բաղդասար Բաղդոյանն էր։ Եկեղեցին փակվել է 1923 թ. խորհրդային իշխանությունների կողմից [ՀԱԱ, ֆ.57, ց.3, գ.525, թ.120-121]։

Ստորև ներկայացնում ենք Թելավի գավառի բնակավայրերն ու բնակչությունը՝ ըստ 1926 թ. մարդահամարի տվյալների

Բնակավայր	**Ընդ. բնակչ.**	**Հայեր**	**Վրացիներ**
Թելավի գավառ	105.244 (53.457 արական, 51787 իգական)	9135 (4662 արական, 4473 իգական)	83.162 (41653 արական, 41509 իգական)
Թելավ քաղաք (თელავი ქ.)	9697 (4885 արական, 4812 իգական)	3606(1706 արական, 1900 իգական)	5063 (2348 արական, 2715 իգական)
Ակուրա (აკურა თემი)	4003 (2057 արական, 1946 իգական)	10 (4 արական, 6 իգական)	3972(2043 արական, 1929 իգական)
Ալվանի (ალვანი)	5113 (1896 արական, 3217 իգական)	54 (36 արական, 18 իգական)	5028(1844 արական, 3184 իգական)
Ախալի-Գավազի (ახალი-გავაზი)	3988 (2106 արական, 1882 իգական)	141 (79 արական, 62 իգական)	3595 (1897 արական, 1698 իգական)
Ախմետա(ახმეტა)	3991 (2057 արական, 1934 իգական)	45 (17 արական, 28 իգական)	3267 (1674 արական, 1593 իգական)
Ջոկոլո(ჯოკოლო)	3968 (1985 արական, 1983 իգական)	10 (7 արական, 3 իգական)	1259 (631 արական, 628 իգական)
Ձվելի-Գավազի (ძველი-გავაზი)	8269 (4303 արական, 3966 իգական)	210 (112 արական, 98 իգական)	5244 (2658 արական, 2586 իգական)
Ենիսելի (ენისელი)	5963 (3099 արական, 2864 իգական)	56 (36 արական, 20 իգական)	5832 (3017 արական, 2815 իգական)
Զեմո-Խոդաշենի(ზემო-ხოდაშენი)	6784 (3537 արական, 3247 իգական)	587 (311 արական, 276 իգական)	4449 (2293 արական, 2156 իգական)

Իղալթո (იყალთო)	6499 (3358 արական, 3141 իգական)	857 (447 արական, 410 իգական)	3915 (2012 արական, 1903 իգական)[1]
Ղվարելի (ყვარელი)	6037 (3092 արական, 2945 իգական)	281 (148 արական, 133 իգական)	5375 (2719 արական, 2656 իգական)
Կուրդգելաուրի (კურდგელაური)	8055 (4098 արական, 3957 իգական)	265 (144 արական, 121 իգական)	7764 (3936 արական, 3828 իգական)
Մատանի (მატანი)	2978 (1531 արական, 1447 իգական)	858 (458 արական, 403 իգական)	2112 (1071 արական, 1041 իգական)[2]
Նափարեուլի (ნაპარეული)	4009 (2098 արական, 1911 իգական)	605 (325 արական, 280 իգական)	3131 (1618 արական, 1513 իգական)
Փշավելի (ფშაველი)	3633 (1917 արական, 1716 իգական)	41 (25 արական, 16 իգական)	2525 (1317 արական, 1208 իգական)
Ծինանդալի (წინანდალი)	8121 (4181 արական, 3940 իգական)	241 (118 արական, 123 իգական)	7840 (4047 արական, 373 իգական)
Շաշիանի (შასიანი)	8978 (4625 արական, 4353 իգական)	1131 (620 արական, 511 իգական)	7803 (3984 արական, 3819 իգական)
Շիլդա (შილდა)	5158 (2632 արական, 2526 իգական)	134 (69 արական, 65 իգական)	2688[3] (2544 արական, 2444 իգական)

Վերոնշյալ աղյուսակից եզրակացնում ենք, Թելավի գավառի բնակավայրերում հայերի թիվը գնալով նվազում էր, և դա պայմանավորված էր խորհրդային իշխանության վարած քաղաքականությամբ: Հայերը համեմատաբար մեծ թիվ են կազմել Իղալթո, Շաշիանի, Զեմո-Խոդաշենի ու Մատանի գյուղերում:

Իղալթոն գտնվում է Թելավ քաղաքից 7 կմ հյուսիս-արևմուտք: Ըստ որոշ տվյալների՝ հայերն այնտեղ բնակություն են հաստատել XVIII դարից: Գյուղում չի եղել եկեղեցի, իսկ

[1] Всесоюзная перепись населения 17 декабря 1926 год, т. 14, СР Грузии, 1929, Москва, стр. 92.
[2] Նույն տեղում, էջ 92:
[3] Նույն տեղում, էջ 92:

հոգևոր ծեսերը իրականացրել են Ռուիսպիրի քահանաները: Նրանց թվում հիշատակվում է Կարապետ Տեր-Ներսիսյանցը [Կարապետյան 83]:

Զեմո-Խոդաշենն ու Մատանը ներկայումս գտնվում են Կախեթի մարզի Ախմետայի շրջանում, իսկ 1920-ական թթ. ընդգրկվել են Թելավի գավառում (уезд): Նշենք, որ ըստ մարդահամարի տվյալների՝ հայերը, ըստ էության, չեն խոսել մայրենի լեզվով: Օրինակ՝ Զեմո-Խոդաշենի գյուղի 587 բնակչից հայերեն խոսել է միայն հինգը: Կարող ենք նաև եզրակացնել, որ մայրենիի վատթար վիճակի պատճառներից էր հայ եկեղեցու գոյության դադարեցումը: 1923 թ. Վրաստանի Թելավի շրջանում գրեթե բոլոր հայկական եկեղեցիները փակվեցին [Կարապետյան 58-98]:

Եզրակացություններ

Ուսումնասիրելով ու վերլուծելով տվյալ ժամանակահատվածը՝ կարող ենք եզրահանգել՝

1. Կախեթում հայերը, XIX դարից սկսած, ունեցել են զգալի ներկայություն, որը տարիների ընթացքում նվազել է:

2. Թելավի գավառում հայ բնակչությունը գրեթե բոլոր խոշոր բնակավայրերում ունեցել է եկեղեցի, իսկ այն գյուղում, որտեղ չի եղել կամ գործել եկեղեցի, հոգևոր կարիքները հոգացել են հարևան համայնքների հայ քահանաները:

3.Հայերը Թելավի քաղաքում ունեցել են զգալի դեր, սակայն աստիճանաբար մոռացել են մայրենին՝ դառնալով վրացախոս:

4.Թելավի շրջանում գրեթե բոլոր հայկական եկեղեցիները փակվել են 1923-1924 թվականներին, սակայն դա խորհրդային վարչակարգի քաղաքականության արդյունք էր:

5. 1926 թվականի Համամիութենական մարդահամարը հստակ տվյալներ է փոխանցում բնակչության տեղաշարժերի մասին, և ուսումնասիրելով այն՝ կարող ենք համեմատականներ անցկացնել նախապատերազմյան շրջանի հետ:

References

1. HAA, f.53, ts’.1, g. 3857:
2.HAA, f.53, ts’.1, g. 3917:
3. HAA, f.56, ts’.1, g. 157:
4.Karapetyan S., Hayery Kakhet’um, Girk’ Y, Yerevan, 2004, 222 ej:
5. Melik’set’-Bek L.M, Girk’ A, 2013, 345 ej:
6. Juansheri, Hamarrot Patmut’iin Vrats’, Venetik, 1884, 147 ej:
7. AKAK. T. 1. Tiflis, 1866. S. 827.
8. Kavkazskiy kalendar' na 1915 god. Tiflis, 1914. 1013 s.
9. Kavkazskiy kalendar' na 1916 god. Tiflis, 1915. 627 s.
10. Kavkazskiy kalendar' na 1917 god. Tiflis, 1916. 1231 s.
11. Vsesoyuznaya perepis' naseleniya 17 dekabrya 1926 goda. T. 14: SSR Gruzii. M., 1929. 428 s.
12. «Mshak», 01.03.1888, №25:
13. «Mshak», 1878, № 79:
14.ts’enguashvili k’oba,sakartvelos 1921-1925 ts’lebis ist’oriis ist’oriograpia,t’bilisi, 2005, 250 gv.
15. kart’lis tskhovrebis t’op’oarkeologiuri leksik’oni, t’bilisi, 2013, 740 gv.